

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՀԱ ԹԷ ՈՒՐ ՀԱՅՏՐԻՆ

Այն, ինչ որ կատարվեց Շուշու թեմական դպրոցում, — մի չը տեսնված դեպք է հայոց թեմական դպրոցների յիսնամյա պատմության մէջ։ Հոգաբարձութիւնը հրաժարված է հրաժարված է ուսուցչական ամբողջ խումբը՝ տեսչի հետ միասին, ուսումը ընդհատված է։ Բարձր դաստաների աշակերտները դուրս են գնում դպրոցից, դպրոցը համարեա փակ է։ — Կրկնում ենք, մեր դպրոցների երկար տարիների պատմության մէջ այդ ախուր, վերին աստիճանի ողբալի դէպքը առաջինն է։

Միայն բարոյապէս ընկած, խորիքներով ողբալի, գիւցիլպիւնայի և կարգապահութեան թշնամիները կարող են ուրախանալ այն բոլորով, ինչ որ կատարվեց Շուշու դպրոցի մէջ։ — Իսկ այդպիսի բարոյական հրէշներ, մենք լաւ գիտենք, կան թէ Շուշու, թէ Էջմիածնում, և թէ նոյն իսկ Թիֆլիսում...

Ինչ է իսկապէս այդ բոլորը։ — Խորիքաւ ինչն է ողբերկ այդ տխուր փաստի դարանամուտ հեղինակներին։ — Խորիքաւ, ինչից է սկսվել այդ բոլորը։ — Խորիքաւ, և անկասկած, սրանից յետոյ էլ, դեռ երկար տարիներ այդ նոյնը կը կրկնվի, եթէ ասպարեղից չեն հեռացնվի սեռահոգի խորիքաւները, եթէ դպրոցը կը գտնվի այնպիսի ճանկերի մէջ, որոնց ամբողջ ոյժը խորիքայի մէջն է, և ամբողջ նպատակը՝ փայլալիկ սանձարձակ կամայականութիւն։

Գպրոցի հոգաբարձուներն և ուսուցչական խումբի հրաժարվելը ու դպրոցի փակվելը՝ անկասկած վերին աստիճանի ցաւալի է։ Բայց աւելի ցաւալին այն է, որ մի քանի խորիքային ձեռքով ստեղծվեցին այն դժոխային պայմանները, որոնք գործը այդ տեղը հասցրին և ուրիշ ելք չը թողեցին։

Ինչ է այդ ամբողջ պատմութիւնը։ — Հաստ պարզ մի խնդիր՝ դիւսցիլպիւնայի խնդիր։ Սրանից մի քանի ամիս առաջ Այլադեան եպիսկոպոսը, հակառակ կանոնադրութեան, որը աւելի քան 40 տարի է գոյութիւն ունի, փորձեց ոչնչացնել հոգաբարձութեան և մանկավարժական ժողովի իրաւունքները, որոնք իրանց կողմից առանձնաբար գործը իրենց թոյլ չը տայու, որ կանոնադրութիւնը խախտվի։ Եւ Էջմիածնի զինուորական նշանակեց։ Վեհափառը, հիմնվելով ժողովրդի և դպրոցի վարչութեան բողոքի վրա, չը հաւատաց այդ քննութեան և Էջմիածնի հրապարակ դպրոցի հոգաբարձութեան ներկայացուցիչներին և տեսուչ Սարգսեանին, հարցը անձամբ ընկելու և վճելու համար։

Եւ վեհափառը ամենայն մանրամասնութեամբ քննելով բոլորը՝ արգարացրեց դպրոցի հոգաբարձութեան և տեսչին, հրամայեց շարունակել գործը, միշտ հիմնվելով կանոնադրութեան վրա, և միանգամայն արգար հանաչեց դպրոցի հոգաբարձութեան և մանկավարժական ժողովի վճիռը, որ։

չը ճարելու պատճառով, յուսահատված՝ գերադաս է համարում իրան անխախտը անել։

Մենքու՞մ փողոցում մի 64 տարեկան պառաւ, տիկին Լաֆայեթ, իրան ածխախող արեց։ Առաջ ենք բերում նրա թողած փողերի տուեակը, իրեն պերճախօս վկայ թշուառութեան, համարտիրոջ պարտական եւ 2 ամսայի քրէշ, պէտք է ինձ դուրս գցեն տանից։ Նստանալու նախապատիւ եւ համարում անվերջ թշուառութիւնից։

Ալեքսանդր Բոյէն 53 տարեկան էր։ 1870 թվ. պատերազմի ժամանակ նա իր ձեռքերը ստուգեց և վնասել էր, բայց մի կերպ կեանքը քարշ էր տալիս ժամագործարանում աշխատելով։ Ահա վրա է հասնում անգործութիւնը, որովհետեւ իր բանած գործարանի գործերը ձախ են գնում, ասպազայում էլ չուտով գործ գտնելու յոյս չը կայ, տան քրէշն ուղղում են, ասպառիկ հաց չեն տալիս... մուրալուց էլ ամ աչում է։ Եւ ահա անուշը կրկին օգնութեան է հասնում ու մարեցնում մի կեանքը, մի կեանք լի սեւ, մաշող կարիքներով...

Մի վերջին փաստ եւս։ Ժիւլի Գլովադեն մի երիտասարդ կին էր, որ ապրում էր իր ձեռքի աշխատանքով Կանէտ փողոցի № 6 տան մէջ։ Նա փողկապներ շինող բանուոր էր, իսկ այդ առհասարակ հազիւ հնար է տալիս իր կեանքը քարշ տալ։ Վերջին ամիսներն էլ վարձադին աւելի է ընկնում։ Ժիւլին չէ կարողանում տան քրէշը

բով մի քանի աշակերտներ, իրանց անկարգութիւնների համար, արձակված էին դպրոցից։

Կաթողիկոսական այդ որոշումով գործը կարգի մէջ մտաւ, խորիքները մի առ ժամանակ լուսեցին և ուսումը դպրոցի մէջ կանոնաւոր ընթացքով ու աղօղութեամբ առաջ էր գնում։

Սակայն խորիքայինները կարճ ժամանակով էին սանձարկւած։ Եւ ահա հազիւ երկու ամիս անցած, նորից սկսեցին երան դալ և տակն ու վրա անել ամեն բան։

Էջմիածնից հեռագիր է ուղարկվում, թէ պէտք է յետ ընդունել արձակված աշակերտներին։ Հոգաբարձութիւնը խոնարհաբար պատասխանում է, և պատասխանում է յարգելի պատճառաբանութեամբ, որ այդ կարգադրութիւնը դժուար է իրագործել։ Վեհափառը յարգելով այդ պատճառաբանութիւնը, հրամայում է չընդունել աշակերտներին, բայց ահա մի քանի օր միայն անցած, ստացվում է Շուշու՝ կաթողիկոսական նոր հեռագիր, որով հրամայվում է անյապաղ աշակերտներին ընդունել։

Եւ ամբողջ հոգաբարձութիւնը և ուսուցչական խումբը, որոնք վաղուց յայտնել էին, որ եթէ աշակերտները յետ ընդունվեն, իրանք ստիպված կը լինեն հրաժարվել, անյապաղ կատարում են Կաթողիկոսի բարձր հրամանը և անմիջապէս հրաժարվում իրանց պաշտօններից։

Ուրիշ ելք չը կար։ Թէ հոգաբարձութեան և թէ խմբի պարտքն էր կատարել հայոց Կաթողիկոսի հրամանը։ — Այդ անկասկած։ Բայց գրա հետ միասին, նոյն հոգաբարձութիւնը և նոյն ուսուցչական խումբը բարոյապէս պարտաւոր էին յարգել դպրոցական դիւսցիլպիւնային, և դրա հետեւանքն էր ահա նրանց հրաժարականը։

Ահա թէ ուր հասցրին խորիքայինները, ահա թէ որովք ընկեցին նրանց անվերջ խռովութիւնները։ Այդ, չնայելով է ասել վեհափառը իր կօնդակներին մէջ։ Եւր մի որ և է հիմնարկութեան մէջ կանոնի, կարգապահութեան փոխարէն կը սկսի տիրապետել մարդկային կամքը միայն, — այնտեղ բարեք լինել չէ կարող։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Հոկտեմբերի 16-ին

Էջմիածնից, Վեհափառից ստացվեց հեռագիր, որով յայտնում է. «անմիջապէս կատարել իր վերջին հրամանը» — ընդունել թեմական դպրոցում եթէ աշակերտներին, կրօնուսոյց տէր Ալեքսանդրին նշանակել ստորին դասարանների համար, իսկ բարձր դասարանների համար ուղարկվում է ուսուցիչ Տէր-Միքայէլեանց։

Երեկ, շաբաթ առաւօտեան, արձակեցին թեմական դպրոցի աշակերտներին, ուսուցչական խումբը տեսչի հետ հրաժարվեցին։ Հոգաբարձուները նոյնպէս հրաժարվում են։

Ուսումնական փակ կը մնայ անորոշ ժամանակով։ Լսում ենք, որ Այլադեան եպիսկոպոսը հրապարակում է հրաժարականը։

Հասցնել Տանտէրը մի գիշակեր, արիւնախումարարած է։ Սեպտեմբերի քրէշը դեռ չէ տուած, Ժիւլին դիմում է ծանօթ — բարեկամներին, որ փող գտնեն և սեպտեմբերի քրէշը տան, եթէ ոչ, տնից դուրս կը գցեն։ Ոչ մի տեղից փող չէ գտնում։ Գաղան տանտէրը վերջնական ժամանակ է դնում մինչև հոկտեմբերի 8-ը։ Հասնում է ժամանակը, 2—3 օր էլ անցնում, բայց փող չը լող չը կայ։ Բարեկամած տանտէրը բարձրաձայնում, թակում է Ժիւլիի սենեակի դուռը, պատուհան չը կայ։ Մարդիկ են հաւաքվում, դուռը դուրս բացանում և... մահաճակալի վրա գտնում են Ժիւլիի արեւն 3 օրվայ մեռած դիակը։

Մի քանի հանգած անուշներ կողքին, մի կտոր շոր պատանի համար և 2 ֆ. 50 սանտիմ փող սեղանի վրա, դրանք արքայութիւնը վերջին սանտիմներն են, ինչ սանտիմներ, ինչ ենք ասում. դրանք քարացած արիւն — քրտնք են, արտասուքներն են հաւաքանքների թանձրացած կտորներ, որ դիւրվել են մի թշուառ կեանքի ընթացքում...

Սակայն կարել էլ չը կայ անվերջ փաստել պատմել։ Այսքանը միայն ասենք, որ այդ բոլորը կատարվել են 2—3 օրվայ ընթացքում միայն, այն էլ ձեռքով դեռ բոլորովին չը հասած, աշխատանքներն իսկ ձեռքով։ Բայց մտածեցէք, թէ որքան ուրիշ ընտանիքներ ցրտի և քաղցա-

րակիր է իբրև տեսուչ Սեդրակ Մանդինեանին, և հեռագրով թշուառութիւն է խնդրել Կաթողիկոսից գնալ Թիֆլիս, առանց հոգաբարձական ժողովի, նոր ուսուցչական խումբ կազմելու։

Գիֆտերիտ հիւանդութիւնը տարածվել է և զոհեր է տանում մանուկներին։

Այսօր տեղի ունեցաւ Մարգարէ Ղաւարեանցի թաղումը. հանգուցեալի կինը, յարգելով իր ամուսնու յիշատակը, նուիրում է՝ օրիորդաց դպրոցին անհատական 500 ռուբլի, Ազուլեաց եկեղեցուն 300 ռուբլի, նոյն եկեղեցու բացվելիք ծխական ուսումնարանին 200 ռուբլի, թեմական դպրոցին 100 ռուբլի, և ամեն տարի երեք լիւթոնակ աշակերտներ պէտք է պահի քաղաքի ուսումնարաններում, իբրև օրիգերներ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկու չաբաթից յետոյ մենք պէտք է բաց անենք «Մշակի» 1895 թվ. նոր բաժանորդագրութիւնը. ուստի խնդրում ենք մեր այն բաժանորդներին, որոնց վրա մինչև այժմ ապառկներ կան, շտապեն ուղարկել այդ ապառկները։

Մեն իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ, որ գտնվում էր Պարիզում, այս օրերս վերադարձաւ Լիւպիւն։

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ վաղը գնանք Բաղրամիս փող չը լինելու պատճառով, պատասխանութիւն է տեսնում փոխառութիւն անելու։

Լսում ենք, որ մեր հնազանդ Ալեքսանդր Երեցեան արդէն տպագրութեան է յանձնել իր «Վոլկայի» հայք և հայոց կաթողիկոսները՝ յիշատակարանի երկրորդ հատորը, և բացի դրանից էլ մի քանի հատորներ կան տպագրութեան համար։

Կովկասի և հարաւային Ռուսաստանի համար, բրիտանական Բրիտանական ընկերութիւնը թարգմանել է տալիս աւետարանը կովկասեան հետեւեալ բարբառներով՝ արքեպիսկոպի, կոմսիկներին, կաշաքաների և հայերի ապարտեան բարբառով։

Մեզ հաղորդում են, որ Բագուի նախագործերի դաշնակցութեան գործերը շատ էլ աշուղ չեն գնում։

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ արգարացի նկատողութիւնը. «Երուսաղէմի վանքը երկար տարիներէ ի վեր ապրում է հայ ազգի փողով ու նուէրներով, և ամեն տարի էլ դիմում է ազգին և փող խնդրում՝ իր պէտքերը հոգալու համար։ Հետաքրքիր է իմանալ, ինչու երբ այդ նոյն ազգը երկու տարի է սովից տանջվում է, և հաւաքին ներդրութիւններ մէջ է, Երուսաղէմի վանքը

ծովեան ճանկերում հիւծվում են լուռ անյաւատութեան մէջ այդ բողոքող զոհերի կողքին. նըրանք հաց չունեն, ցուրտ է, տանտէրը սպառնում է փողոց չարտիկ...»

Թշուառութիւն, զարհուրելի թշուառութիւն, և այն՝ Պարիզում, շուշուութեան, պահանջների յեղափոխական շարժումների համաշխարհային կենտրոն Պարիզում։ Բոլոր պահպանողական և կղերական լրագրիւնները միջոց գցում են լաւ բառախոսում ընկերութեան վրա։ Բայց ինչ կարող է անել այդպիսի մի ընկերութիւն Ի հարկէ, նա մի քանի սպանութիւնների առաջը կարող էր առնել իր ողորմութիւններով իսկ ցաւն արմատից բուժել, նրա պատճառները ոչնչացնել՝ երեքէք ինչ ողորմութիւն, երբ հասարակական ամողջ կազմն է ախտաւոր, երբ հասարակութեան մեծ ամասնութիւնն է աղքատը, կարիքի մէջ լողացողը։ Ուրիշ բան է, եթէ զէպքերը լինէին մասնաւոր, սակաւթիւ. սակայն ցաւը խորհրդական և ընդհանուր է արդէն։ Բոլոր դարգացած երկրներում այդ հարցը սուր կերպարանք է ստացել և լուծում է պահանջում. աղքատը մեռնում է սովից ու ցրտից։ Նրանց թիւը գնալով աճում է, իսկ հարուստներին քաշում, երեկվայ հարուստը մի հարուստով դուրս է աղքատներից, սեփականազուրկների շարքը։ Դրամադուրը կենտրոնանում է սակաւթիւ անհատների ձեռքին, իսկ մեծամասնութիւնն աւելի և

ոչ նիւթապէս և ոչ բարոյապէս մի փոքրիկ օգնութիւն անգամ չէ հասցնում կարօտ ժողովրդին։ Կամ գուցէ վարդապետները կարծում են, որ ժողովրդի պարտքն է իրանց կերակրել, իսկ իրանք միայն ուսելու համար են ստեղծված և ոչ օգնելու։

Երկաթուղիների մարդատար գնացքների համար նոր տարիքի հաստատելուց յետոյ, այլ ևս ոչ ոքին ձրի տոմսով չի տրվի երկաթուղիներով ճանապարհորդելու համար՝ ոչ երկաթուղիական վարչութիւնների կողմից և ոչ էլ հաղորդակցութեան ճանապարհների միջնորդութեան կենտրոնական հիմնարկութիւններից։

Նորերս պրոֆէսոր Մարր առանձին գրքով հրատարակել է հետեւեալ երկու աշխատութիւնները. «О начальной истории Армении Анонима. Къ вопросу объ источникахъ истории Моисея Хоренскаго», որ գրված է պրոֆէսոր Կարիէրի քննադատական յօդուածների առթիւ։ Երկրորդ գրքի վերնագիրն է «Надгробный камень изъ Семирамиды, съ армянско-сиринской надписью 1323 г.»։ «Մշակի» յաջորդ համարներից մէկում կաշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին պրոֆէսոր Մարրի այդ նոր աշխատութիւններին հետ։

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ս. Կարապետ եկեղեցու միաբան Նիմանուէլ քահանայ Նաղաւրեան քարոզիչ է նշանակված Հաւարարի բոլոր եկեղեցիների համար, և արդէն սկսել է իր քարոզները։ Շատ ուրախալի է։

Շտապում ենք ուղղել մի սխալ, որ մտել է «Մշակի» № 119-ի մէջ։ Թիֆլիսից Տէր-Գրիգորեան քահանայ, ի միջի այլոց նուիրել է 100 ռուբլի Հրատարակչական ընկերութեան, որ սըլխալմամբ չէր մտել այդ համարում տպված ցուցակի մէջ։

Հին-ՆԱԽԻՋԱՆԻՍԻՑ մեզ գրում են. «Գուցէ ոչ մի տարի թէ քաղաքում և թէ գաւառում այնպէս տարածված չեն եղել վարակիչ հիւանդութիւնները, գլխաւորապէս դիֆթերիա, ինչպէս այս տարին։ Օր չէ անցնում, որ գիւղերից չը լսվեն անմիթիւնար և վրդովեցուցիչ լուրեր, թէ այս ինչ տեղում մեռան այսքան հոգի՝ գլխաւորապէս մանուկներից, կամ այն ինչ տեղում այսքան հոգի անյոյս հիւանդներ կան։ Գիւղերից յետ չէ մեռում և քաղաքը, ու արդէն եղել են մահվան դէպքեր, և զոհերի թիւը չէ պակասում։ Հասարակ դասակարգն ունի իր սեփական և տարբերակ հայեացքները դիֆթերիա հիւանդութեան մասին. նա ունի և իր սեփական միջոցները նրան բռնկելու համար, որոնք ոչ թէ համապատասխան են լինում բժշկների ասածների հետ, այլ մինչև անգամ հակառակ։ Առաջին անգամ, երբ հիւան-

աւելի խորն է թաղվում աղքատութեան, թըշուառութեան ու կեղտի ծովը մէջ։

Եւ այդ հարցն է ահա, որ այսօր խնդրում է մնացած բոլոր հասարակական հարցերին։ Դա նոր հարց չէ. դրա արմատները թաղված են դարերի միջով։ Նա կար հին Յունաստանում, Հռոմում, միջին և նոր դարերում։ Նա այժմ աճել, սուր կերպարանք է ստացել։ Դա է, որ այժմ կոչվում է «Գրամագլխի» և աշխատանքի կոչի, ժամանակակից հասարակութեան համար ամենակարևոր՝ տնտեսական հարցը։

Այստեղ առաջ կը բերենք Պարիզի քաղաքային խորհրդական Գիւրուայի ձեռն վերջին կտորը, որ նա արտասանեց Թիֆլիսի Հոֆմանի և իր վեց գաւակների թաղման ժամանակ։ Նա նախ մատնանի արեց ներկայ կեանքի ամենատխուր հարցի վրա, ցոյց տուեց այդ թշուառութեան պատճառը և վերջն աւելացրեց.

«Նշվեց խաղաղութեամբ, խեղճ, անմեղ զոհեր, դուք իսկական մարտիրոսներ էք։ Եւ մենք յարգանքով կը խոնարհվենք ձեր գերեզմանների առաջ, որտեղից եւ ստանանք անհրաժեշտ ոյժը և եռանդը՝ ոչնչացնելու ներկայ հրէշաւոր հասարակական դրութիւնը, որ ստեղծում է այս թշուառութիւնները և արտադրում այս կատաղի հաւուածները։ Նշվեց խաղաղութեամբ։

զը զանգառուում է, թէ թուրք ազատ կու տալ չէ կարողանում, թէ կոկորդը ցատում է՝ հաստա-րակ դասակարգի չի ջանում աշխատում են մասի-ծայրով ճնշել, ազմել հիւանդի կոկորդուս յայտն-ված ուսուցիչը, որպէս զի այդպիսով նրա աճելու առաջն առնեն: Եթէ դա չէ օգնում՝ այն ժամա-նակ հիւանդից արեւն են առնում: Իսկ բժիշկնե-րը, գտնէ այստեղի բժիշկները, զիֆտէրիտի ժա-մանակ արիւնհոտութիւնը չափ վտանգաւոր են համարում: Արիւնը առնում են զլիսաւորապէս զլիսի առջին մասից: Կոկորդը զրաի կողմից, հի-ւանդութեան ամբողջ ժամանակ, կապում են թը-թուկներով՝ զլիսաւորապէս թիթի սալորով, կամ թիթու վարունգով: Ժողովրդի մէջ շատ տարածված են այդ միջոցները և նա հաւատում է այդ անա-ջող միջոցներին:

ԿԱՐՍԻՅ մեղ գրում են. «Այստեղի ամենահա-րուստ վաճառականներից մէկը, այս օրերս իր քրոջ հարսանիքի ժամանակ նուիրեց յոգնատ, դարձրեց... տասն բուրլի: Իսկ մի ուրիշ հարուստ, որը ի յիշատակ իր հանգուցեալ որդու խոտաջել էր նուիրել տեղական դպրոցին 200 բ., մինչև այժմ դրամը չէ հասցրել հոգաբարձութեանը...»

ՆՈՒԽՈՒՅ մեղ գրում են. «Մօտիկ անցեալում այստեղ մի տարօրինակ դէպք պատահեց, որը թէև ուշ, սակայն աւելորդ չենք համարում հա-ղորդել: Սրանից մի երկու տարի առաջ, Շուշու գաւառից մի երիտասարդ, Ալէքսան կեղծ անու-նով, գալիս է Նուխի՝ աշխատանք անելու: Այս տարի նա այստեղ պատկերում է մի երիտասարդ այրի կնոջ հետ: Մի երկու ամիս միասին ապ-րելուց յետոյ, մէկ օր յանկարծ երիտասարդը ան-հետանում է: Նրա անհետանալու լուրը տարած-վում է և զանազան բարձրաստիճանի նիւթ տա-լիս: Վերջապէս դժբաղդ կնոջ եղբայրը, մի ստոյղ տեղեկութիւն իմանալու համար, գնում է փա-լած փետայի գիւղը, անձամբ տեղեկանալու: Եւ ինչ, այնտեղ տեսնում է, որ նա ունի կին, և մի 5 տարեկան տղայ: Սակայն փեսան գիւղումը չէ լինում: Այդ բոլորը տեսնելուց յետոյ որոնողը զլիսակոր վերադառնում է Նուխի և անմիջապէս յայտնում տեղական թէ հողեր և թէ մարմնա-ւոր իշխանութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ԹԱԳԱՌՈՐ ԿԱՅՍՐԻ ՀԻ-ԽԱՆԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թագաւոր Կայսրի հիւանդութեան լուրը յետ է մղել ներքին քաղաքականութեան գործերը Ֆրան-սիայում: Բոլոր լրագրիները լի են համակրու-թեան արտայայտութիւններով և յոյս են յայտ-նում, որ լաւ վիճակում կունենայ Թագաւոր Կայ-սրի հիւանդութիւնը: «Եւրօպան ամենամեծ յուզ-մունքով, գրում է «Temps» լրագիրը:—հետևում է Ռուսաստանից ստացվող տեղեկութիւններին: Ոչ միայն Ֆրանսիայում, ուր բոլոր սրտերը համա-կրութեամբ են բարձրադարձով պետութեան Միապետի համար, բայց և ամբողջ Եւրօպայում ուսուսաց Թագաւորի հիւանդութեան լուրը ցնցող տպաւորութիւն գործեց: Մեր ռուս բարեկամները, շարունակում է լրագիրը,—կարող են հաւատա-ցած լինել, որ ներկայ րօպէում չը կայ ոչ մի անկիւն Ֆրանսիայում, որտեղից ամենաջերմ ա-ղօթքներ և բարեմաղթութիւններ չը լսվեն, չը կայ ոչ մի ընտանիք, ուր ամենամեծ ուրախու-թեամբ չը սպասեն Ալէքսանդր Թագաւորի առող-ջութեան լուրը:» «Ռուսաստանից ստացված եր-կուշալի տեղեկութիւնները, ասում է մի ուրիշ լրագիր,—ստիպում է մեղ յիշել այն, թէ որքան եւրօպական խաղաղութիւնը պարտական է Կայսր Ալէքսանդր III-ին: Եւրօպական բոլոր թագաւոր-ներից չը կայ ոչ մէկը, որ խաղաղութեան այն-պէս հանդուժած կողմնակից լինէր, որպէս ռու-սաց Թագաւորը:»

Անգլիական լրագիրները, տեղեկութիւններ հա-ղորդելով Թագաւոր Կայսրի հիւանդութեան մա-սին, ցաւակցական յոգնածներ են նուիրում այդ անցքին: Բոլոր լրագիրները միաձայն չենքում են ուսուսաց Միապետի խաղաղասիրութիւնը և մատ-ցեցող են անուժ այն բանի վրա, որ Եւրօպան հանգիստ կարող էր լինել, քանի որ Ռուսաստա-նի արտաքին քաղաքականութիւնը ղեկավարվում էր Ալէքսանդր III-ի խաղաղասէր ձգտումներով:

«Standard» լրագրի խօսքերով, Թագաւոր Կայսրի հիւանդութիւնը ցատկ է մանաւանդ այժմ, երբ պատերազմը հեռու Արեւելքում կարող է լուրջ բարդութիւններ ստեղծել: «Times» լրագիրը ա-սում է. «Նորին վիշտ և անկեղծ համակրութիւն,— ահա այն զգացմունքները, որոնցով կրթված աշ-խարհը կարող է տեղեկութիւններ ուսուսաց Թա-գաւոր Կայսրի հիւանդութեան մասին:»

Գերմանական մամուլը իր ամբողջ ուշադրու-թիւնը նուիրում է ռուսաց Թագաւոր Կայսրի հիւանդութեանը: Լրագիրները միաձայն գովում են Թագաւոր Կայսրի հաստատ, խաղաղ և արդար քաղաքականութիւնը: Ռուսաց Թագաւոր Կայսրի «մարդասէր, խելացի և խաղաղ մեծութիւնը,— ասում է «Hamb. Nachr.» լրագիրը,—խուսա-փում էր միշտ զօրութեան և փալի արտաքին արտայայտութիւններից:»

Աւստրիական լրագիրներն ևս զովաւանում են ուսուսաց Թագաւոր Կայսրի խաղաղասիրութիւնը և նրա բարոյական բարձր յատկութիւնները: Օրի-նակ, աւստրիական մի լրագիր ասում է. «Այժմ թագաւորող ռուս Կայսրի խաղաղասէր զիտաւո-րութիւններին ամենքն այնպէս են ընտելացել, որ եւրօպական քաղաքականութիւնը ապահոված են համարում որ և է լուրջ վտանգից, քանի որ Ալէքսանդր III-ը կրում է ռուսական թագը:»

ՅԵՏԱՔԻՄ ԶԲՏՈՒՄՆԵՐ

Ազատամիտ կուսակցութիւնը Գերմանիայում յուզման մէջ է: Ժողովրդական իրաւունքները կրճատելու սպառնալիքները յիշեցնում են գեր-մանական ազգին՝ քառասնական և ութսունա-կան թուականներին նրա կրած թշուառ օրերը: Այդ օրերը այնքան ծանր տպաւորութիւն են թողել ժողովրդի վրա, որ նոյն իսկ պահպանու-ղականների ստուար մեծամասնութիւնը, որը և ան-ցեալում աշխատել է սահմանադրական իրաւունք-ների կրճատման համար, այժմ ոչ միայն չէ համակրում այդ զիտաւորութիւններին, այլ և մտադիր է նոյն իսկ մեծ դիմադրութիւն ցոյց տալ այն նախագիծին, որի նպատակն է սահ-մանափակել մամուլի և խօսքի ազատութիւնը, և արգելել ժողովներ գումարելը:

Գերմանիայի համար ազատ հիմնարկութիւնե-րը և անկախ ու անարգել ընդադատութեան պա-հանքը այնքան խոր արմատներ է ձգել ժողովրդի մեծամասնութեան մէջ, որ այլ ևս չէ կարող վի-ճարարութեան առարկայ համարվել: Գուցէ ժա-մանակաւորապէս կարող է ժողովրդական ի-րաւունքը ճնշվել, ազգային հասարակական ձայնը խղզվել, բայց դուք միայն սուր բողոքով, նրա համար, որ նա երևան գայ աւելի մեծ ոյժով, աւելի կատաղի կերպով:

Գերմանական լրագրատաղի պատգամաւոր և ազատ մտածող կուսակցութեան աչքի ընկնող ներկայացուցիչներից մէկը՝ Ալէքսանդր Մայէրը զգացված ասում է. «Պետական հիմնարկութիւն-ները, ազատութեան աստիճանը և ազգի նիւ-թական առաջադիմութիւնը այնպէս սերտ կապ-ված են միմեանց հետ, որ ուղ համարձակվի այդ կապը քանդել, նա խորտակած կը լինի ազգային մեծութեան, քաղաքական, մտաւոր և տնտեսական զարգացման էական հիմունքը: Գերմանական վեր-ջին կէս դարու պատմութիւնը դրան վկայ է:»

«Առանց ազատամիտ հաստատութիւնների Գեր-մանիան երբեք չէր հասնի այն ծաղկած դրու-թեան, որ նա ունի այժմ: Ութսուն թուականնե-րին, երբ Ռիսմարկի բռնակալական ոգին հասաւ իր արտայայտութեան գագաթնակէտին, աղա-տամիսները միացան՝ պաշտպանելու ազատ հիմ-նարկութիւնները, քաղաքացու անկախութիւնը, խօսքի և խղճի ազատութիւնը: Եթէ այսօր էլ մեր ժողովրդի այդ թանկագին արտօնութիւնե-րին վտանգ սպառնայ որ և մէկը, մենք ազատա-միտ հայեացքներով տէր բոլոր գործողներս մո-ռացութեան կը տանք մեր մարմնաւոր ներքին անհամաձայնութիւնները և միահամուռ ոյժով պաշտպան կը հանդիսանանք դարերի վրա սաւառ-նող ազատ ոգի ունեցող հիմնարկութիւնները:»

Այդ խոր զգացված խօսքերը, ինչպէս և շատ ուրիշ գերմանական հրապարակախօսների և դո-կտրինի ոգեւորված ձուլերը մեծ արձագանք են գտնում գերմանական ժողովրդի մեծամասնու-թեան մէջ և առաջ են բերում մի այնպիսի ընդ-հանուր յուզումներ, որ հազիւ թէ խաւար և յե-տադէմ ծրագիրներն հեղինակները համարձակվեն

ներկայացնել իրանց առաջարկութիւնները լրիս-տագին: Ազատ հիմնարկութիւնները նոյնպիսի պահանջ են դարձել եւրօպական ազգերի հասա-րակական կենքի համար, ինչպէս օրը նրա ֆի-զիքական գոյութեան համար:

ԱՂԱՇԿԵՐՏԻ ԴՐՈՒՄԸ

Մեղ հետեւել տեղեկութիւններն են հաղոր-դում. «Ալաշկերտու գայմազամը մօտերս հեռագ-րեց Եւրօպայի կուսակալին և 400 զինուորներ ու 2 ձիարարձ թնդանօթ բերել տուաւ Ալաշկերտու սահմանում քնակող կողոպտիչ համիդիէի հը-րոսակ բրգերը զսպելու, որոնք իրանց աւաղա-կութիւններն չափազանցութեան հասուցած են:»

Այս վերջին 3—4 տարվայ ընթացքում հասն-ցի և բարադիչ համիդիէի ըստած բրգերը կո-ղոպտեցին Վերին Բասնի և Ալաշկերտի շատ հայ գիւղերի շարժական և անշարժ կայքը, ան-ցած տարի օր ցերեկով տարան մոլա-սուղեման-ցի տէր-Միսթարին 400 զուր և ոչխարը, Սիւստայ Միլիք աղի 800 զուր և ոչխարը, Խոջան գիւղի 1400 զուր և ոչխարը, Զէտկանայ նախիրը, Բասնի Վալի-բաբա գիւղի նախիրը, Եւզլիքան գիւղի ոչխարները: Մօտ օրերս թողովեան գիւղի մօտ կողոպտեցին հայ բողոքական պատուելի Սուքիա-սի տունը, հրացանի գնդակով մեռցրին երկու ծառան, և կողոպտեցին նրա շարժական և ան-շարժ կայքը:

«Կողոպտելով իրանց չրջակայք բնակող հայերի հարստութիւնը, համիդիէի բրգերը այս տարի սկսեցին կողոպտել միմեանց, որովհետև այս քանի տարվայ ընթացքում հայերի հարստութիւնը կողոպտեցին և ոչինչ չը թողին: Այժմ սկսեցին իրենք իրենց կողոպտել, դօրեղն անդորին, այդ բանի առաջն առնելու համար գայմազամ զօրք-բերել տուեց Եւրօպայից, զաղաքացիներ համիդիէ-կան բրգերը իրար կողոպտելուց, և հաշտութիւն ձգեց մէջ տեղերը:»

ԳԻՏԵՐԻՏԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Բժշկապետ Բուրի գտած դեղը զիֆտէրիտի դէմ, ինչպէս յայտնի է, յանձնված էր մի յատուկ յանձ-նաժողովին ստուգելու և ստուգելուց յետոյ մի ղեկուցում ներկայացնելու այդ մասին: Այս օրերս այդ յանձնաժողովը ներկայացրեց իր ղեկուցումը Ֆրանսիական բժշկական ակադէմիային, որի մէջ յանձնաժողովը գովաբանում է զիֆտէրիտի բը-ժշկութեան այդ նոր եղանակը և անպայման օգտակար է համարում բժշկապետ Բուրի գտած նոր միջոցը: Ֆրանսիական բժշկական ակադէմիան միաձայն հաւատութիւն տուեց այդ ղեկուցման:

Բժշկապետ Բուրի հաշուով, տարեկան 6000 Փը-րանկ կը հարկաւորվի այդ դեղը մատակարարե-լու Պարիզի բոլոր հիւանդանոցներին: Բայց որով-հետև «Figaro» լրագրի բացած ստորագրութեամբ հաւաքվել է արդէն համարեա 300,000 Փրանկ, այդ պատճառով վճռված է Պատետօրի ինստի-տուտում ընդարձակ չափերով զիֆտէրիտի դեղ պատրաստել ամբողջ Ֆրանսիայի համար: Այդ նպատակով մտադրութիւն կայ մեծ քանակու-թեամբ ձիւր դնել, որոնց կը պատահասով զիֆ-տերիտ: Որպէս զի ձին վարակվի զիֆտէրիտով՝ 70 օր է պահանջվում, և վեց շաբաթ անցնելուց յետոյ միայն, մի քանի պատահաւորութիւն յետոյ, ձիու արիւնը ընդունակ է դառնում զիֆտէրիտ հիւանդութեան առաջն առնել և իբրեւ դեղ դո-րածով: Իւրաքանչիւր 20 օրը մի անգամ, ա-ռանց վնասելու ձիուն, կարելի է երկու լիտր ա-րիւն առնել նրանից, որը բաւական է 40 երեխա-ներին զիֆտերիտից փրկելու համար:

Պարիզի լրագիրները գաւառներում զիֆտէրի-տի բժշկութեան մի քանի պատմական դէպքեր են հաղորդում: Շէրբուրգում զիֆտէրիտով հիւանդ մի երեխայ համարեա արդէն մահամբձ էր, երբ Պարիզից ստացված հակազիֆտէրիտային դեղը հրաշալի կերպով բժշկեց նրան: Նա լաւ զգաց-իրան արդէն առաջին պատահասից յետոյ, իսկ երկրորդ պատահասից յետոյ արդէն կատարեա-պէս առողջ էր: Եւ այդպիսի դէպքեր մի քանիսն էին գաւառներում: Ֆրանսիական հանրապետու-թեան նախագահը, որը շատ հետաքրքրվում է այդ նոր բժշկութեամբ, «Figaro» լրագրին ու-ղարկեց 5000 Փրանկ:

ԱԶԱՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ

Մեր ընթերցողներին յայտնի է արդէն, որ Հռո-մի պապը զիտաւորութիւն ունէր մի ժողով գումարել վատիկանում՝ եկեղեցիները միացնելու հարցը քննելու համար: Այդ առիթով Հռոմից գրում են «Polit. Corresp.» լրագրին հետեւալը. «Կ. Պօլսի հայ-կաթօլիկների Ազարեան պատ-րիարքը, որին Բ. Գուռը իրաւունք չը տուեց Հռոմ գնալ, ուղարկեց պապին մի մանրամասն ղեկուցադիր, արեւելեան եկեղեցիները կաթօլիկ եկեղեցու հետ միացնելու հարցի առիթով:»

Ազարեան պատրիարքը իր աղ ղեկուցագրի մէջ ապացուցանում է, որ անհարին է միանգամայն բո-լոր օտարադաւաններին կաթօլիկ կրօնը ընդունել տալ: Նրա կարծիքով, նպատակին կարելի է հաս-նել միայն մի ճանապարհով, այն է աշխատել, անդադար և եռանդուն պրօպագանդայի շնորհիւ, մաս մաս կաթօլիկ դարձնել օտարադաւաններին:

Վերջիշաւ նպատակին հասնելու համար, Ազարեան պատրիարքը խորհուրդ է տալիս հո-գեւոր սեմինարիաներ հիմնել զանազան կրօնների համար Արեւելքում, և մի նոյն ժամանակ պրօպա-գանդայի գործը յանձնել բացառապէս այդ սեմի-նարիաների սաներին, և ոչ թէ կաթօլիկ միսի-օնէրներին:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍԱՆԻՑ

Թաւրիզ, հոկտեմբերի 5-ին
«Մինչև չը դայ յետին» չի յիշվի առաջին» — ժողովրդական առածը ճիշդ Արարատականի հայ ժողովրդի համար է ասած: Հանգուցեալ Միխ-թարեան եպիսկոպոսին այժմ միայն մտաբերում ենք, երբ նրա սանձահարած գազանները՝ զգալով նրա բացակայութիւնը, սկսել են անտէր հօտի վրա յարձակվել և գիշատել... Պարզ է, թէ ինչ կը լինի այն հօտի դրութիւնը, որի հովիւը, փո-խանակ իր հօտի մասին մտածելու, կը դառնալի «աշխարհային վաղանցուկ կենսքը վայելչութեամբ անցկացնելով:»

Ինչ է այսօր Արարատականի հայ ժողովրդի դրութիւնը, ում է յանձնված նրա պաշտպանու-թիւնը.—այդ ինքը թշուառ ժողովուրդն էլ չը գիտէ: Այդ է պատճառը, որ նա՝ կամ անտը-տուշ տանում է ամեն տեսակ զրկանք, ամեն տեսակ հարստահարութիւն, և կամ յուսահատու-թեան վերջին ճղնաժամին՝ երբեմն սրան է դի-մում, երբեմն նրան...:

Բաշխրօղուկ զրդական զնդերը սպառելով սուր-թանի հպտակ հայերի կայքն ու ստացուածքը, այժմ իր լանկթամուրեան արշաւանքը սկսել է դէպի սահմանից դուրս, դէպի պարսկահպտակ հայերը: Սրանից երկու ամիս առաջ Մարմատի Գէրեկ վանքը կողոպտելուց և բոլորովին ամայի դարձնելուց յետոյ, այս օրերս 300 հոգուց բաղ-կացած բրգերի մի խումբ, սահմանն անցնելով՝ մտնում են Մակուայ լեռնի երկրի և յարձակվե-լով «Թաղէտ» առաքեալ: հիւսուտուրը վանքի վրա, կողոպտում են ամեն ինչ և թաղէտն առաքեալը Գէրեկի պէս ամայի դարձնում: Այդտեղի ժողո-վուրդը շատ լաւ հասկանալով՝ թէ ոչինչ չէ կա-րելի սպասել Թաւրիզից, դիմում են Էջմիածին, Կաթօլիկոսին, մանրամասն տեղեկագրելով ամեն ինչ և խնդրելով նրա պաշտպանութիւնը: Անցեալ օր Էջմիածնից ստացվեց մի հեռագիր առաջնոր-դարանի հասցեով, որով կարգադրվում է դիմում-ներ անել պարսից կառավարութեան և պահան-ջել վանքի վնասները: Չը գիտենք մինչև այսօր դիմումներ եղել են, թէ ոչ: Զարմանալի բան, փո-խանակ առաջնորդարանը իր ժողովրդի վիճա-կի տեղեկագիրը ուղարկելու Էջմիածին, Էջմիա-ծինն է տեղեկագրում առաջնորդին, թէ «քո վիճակի ժողովրդի դրութիւնն այսպէս է:»

Այստեղի առաջնորդարանը, որ ժողովրդից պտղի կոչված տուրքը կանոնաւոր և ժամանա-կին հաւաքելու համար Արարատականի ամեն մի անկիւնում գործակալներ ունի նշանակած՝ միթէ չէ կարող նոյն գործակալներին պատուիրել եր-բեմն երբեմն ժողովրդի վիճակի մասին տեղե-կութիւններ տալ իրան, որ այսօր, մեր քթի ա-ռաջը եղող Մակուայ պատահած արկածների մա-սին Էջմիածնից ենք միայն կարողանում տեղե-կութիւն ստանալ:

Այս դեռ ժողովրդական հարցերը. կրօնական և եկեղեցական հարցերն էլ նոյն թշուառ դրու-թեան մէջ են:

Մար.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բժնիկը «Presse» լրագրին հաղորդում են, որ Բժնիկը ուսանողները վճարեցին դիմել գերմանական ամբողջ ուսանողությանը՝ հրապարակելով նրանց մատուցանել ուսանողության կողմից մի որ և է պատուաւոր ընծայ իշխան Բիսմարկին։

Նրա ծննդեան 80 ամեակի առթիւ Գերմանական բարձրագոյն դպրոցների ներկայացուցիչների ժողովը, որը պէտք է շուտով տեղի ունենայ Բերլինում, կը քննի այն հարցը, թէ արդիւնք ընծայ պէտք է մատուցանել իշխան Բիսմարկին։

—Գերմանական լրագրիները խօսքերով, անցնալ չարաթիւ, ուրբաթ օր, տեղի ունեցաւ պրուսական միլիտարների խորհուրդը, որ տեղեց առաւօտեան 9 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ։ Չը նայելով այդ երկարատեւ նիստին, խորհուրդը չաւարտեց յետափոխական կուսակցութիւնների դէմ մշակված օրինադրների քննութիւնը։

Ընդունված վճիռները գաղտնի են պահվում։ Յայտնի է միայն, որ մտադրութիւն կայ նոր օրէնքը տարածել ամբողջ կայսրութեան մէջ։ Գերմանական մի լրագիր ասում է, որ այդ նիստում քննվում էր մամուլին վերաբերեալ օրէնքի փոփոխութեան նախագիծը, այն է լրագրիների դրութաւոր խմբագիրների պատասխանատուութեան հարցը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի քաղաքի «կաղնի» պալատի կառավարիչը դիմում է միջնադարից հնարարական արվեստին և խնդրում թող տալ ոչնչացնել արվեստի մէջ գտնված բոլոր հին գործերը իրեն աւելորդ թղթեր։

Ստացվում է թոյլտուութիւնը՝ կատարելով դէպքերում հրամանը և ոչնչացնելով բոլոր գործերը, կառավարիչը զրուս է դէպքերում հրամանին։

«Համաձայն ձեր թոյլտուութեան ոչնչացրի բոլոր հին գործերը իրեն աւելորդ թղթեր։ Բայց, — աւելացնում է նա. — նկատի ունենալով, որ գուցէ որ և է տեղեկութեան (справка) կարիք լինի, հրապարակել բոլոր այդ գործերի պատճենները հանել, փակեցնել տալ և պահել։»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՏԱՑԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԻԹԻՒՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 հոկտեմբերի։ Բիւլլետեն հոկտեմբերի 17-ին, երեկոյան 8 ժամին։ Օրվայ ընթացքում թագաւոր կայսրը քիչ կերաւ և իրան աւելի թող էր զգուշ, սովորական հազը, որից Նորին Մեծութիւնը վաղուց տանջվում է, կոկորդի և շնչափողի խրոխտական կատարի պատճառով, սաստկացաւ և թուրքի մէջ մի փոքր արեւն երևաց։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 հոկտեմբերի։ Բիւլլետեն հոկտեմբերի 18-ին, առաւօտեան 11 ժամին։ Թագաւոր կայսրի առողջական դրութիւնը նշանաւոր կերպով վատացաւ. երէկ սկսված արեւնաթրու թիւը, սաստիկ հաղի պատճառով, աւելացաւ և սահմանափակ բարձրացան դրութեան (ինֆարկտ) նշաններ երևացին ձախ թոքում. դրութիւնը վատնաւոր է։ Երեկոյան 10 ժամին։ Օրվայ ընթացքում թագաւոր կայսրը արեւնաթրու խուրի էր թրուս. դողալից, տաքութիւնը 37,8, պոլսը 90, թոյլ է։ Նշանութիւնը դժուարացած է. աւործակը չափազանց թոյլ է. մեծ թուլութիւն է նկատվում. ոտների ուռուցքը նշանաւոր կերպով մեծացաւ։ Երէկ թագաւոր կայսրը ցանկացաւ ու հաղորդութիւն ընդունել։ Հայր Եսայի Սերգիեւ վաղ պատարագ մատուցեց Ընդունում և ապա ու հաղորդութիւնով եկաւ և հաղորդեց թագաւորին, ի մեծ մխիթարութիւն Նորին Մեծութեան։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 հոկտեմբերի։ Երէկ Պետերբուրգի լրագրիները խմբագիրները, հաւաքելով «СВѢДѢНІЯ» լրագրի հրատարակիչ Կոմարովի մօտ, վճարեցին իրանց սեփական հեռագրական գործակալութիւն հիմնել մայրաքաղաքի լրագրիների սինդիկատի ձեռքով։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 հոկտեմբերի։ Բիւլլետեն հոկտեմբերի 19-ին առաւօտեան 10 ժամին։ Գիշերվայ ընթացքում թագաւոր կայսրը քնեց մի քանի ժամ, արեւնաթրու խուրի դալը մի փոքր պակասել է. մնացածում փոփոխութիւն չը կայ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 18-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	92 ր. 85 ֆ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45 ր. 52 ֆ.
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36 ր. 75 ֆ.
Ռուսի . . .	արծէ . . . 7 ր. 48 ֆ.
Մաքսային կուպոններ . . .	149 ր. 75 ֆ.

Արծաթ . . .	—	—	—	—	—
Օրդաւային դիմիտ . . .	—	—	—	5	7
Եղ. բանկի 50/100 տոմս 1 շրջանի . . .	—	—	—	—	—
— — — — — 2-րդ . . .	—	—	—	—	—
— — — — — 3-րդ . . .	—	—	—	—	—
40/100 պետական բէնտա . . .	—	—	—	94 1/8	—
50/100 ռուսկայ բէնտա 1884 թ. . .	—	—	—	160	—
41/2 ռուսկայ փոխառութիւն . . .	—	—	—	—	—
Արեւելեան 50/100 փոխառ. 1-ին շրջ. . .	—	—	—	—	—
— — — — — 2-րդ . . .	—	—	—	—	—
— — — — — 3-րդ . . .	—	—	—	—	—
— — — — — 4-րդ . . .	—	—	—	—	—
Ներքին 50/100 առաջին փոխառութ. 237 . . .	—	—	—	50	—
— — — — — երկրորդ . . .	—	—	—	217	—
Պետական երկաթուղային բէնտա . . .	—	—	—	101	25
41/2 բէնտա . . .	—	—	—	101	25
40/100 ներքին փոխառութեան . . .	—	—	—	96	—
50/100 դրաւ. թղթ. ագն. կալ. բանկի . . .	—	—	—	—	—
Ագն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. . .	—	—	—	—	—
Գրաւ. թղթ. . .	—	—	—	193	—
41/2 ձկնայ. գիւղ. հող. բանկի . . .	—	—	—	—	—
41/2 ձկնայ. գրաւական թղթեր կալուած. . .	—	—	—	—	—
փոխ. կրեդիտ. ընկեր. մատաղ. . .	—	—	—	151	—
— — — — — թղթադ. . .	—	—	—	—	—

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրինադրանքը. 100 1/8 . . .

Մոսկւայի քաղաք. օրինադրանքը. 100 1/8 . . .

Օդէսայի . . . 100 . . .

Թիֆլիսի . . . 96 . . . 50 . . .

Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. 100 . . .

— — — — — Գրաւ. թղթ. 100 . . .

Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը ամուր է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՍԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ

ՀԻՒՍՏԱՑԻՆ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, արֆիլիս և վիսերական հիւանդութիւնների։

Գ. Գ. ՋԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեար-դային հ. . .

Կ. Գ. ԲՈՒԴԱԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երե-խանների և կանանց հ. . .

Կլին. բժիշկ ՏՈՒՐՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ. . .

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11—1 ժ. ախանջի, կո-կորդի, թրի և կրծքի հ. . .

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երե-խայց հ. . .

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի և սեռական օրգանների հ. . .

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ. . .

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—7—7 1/2 ականջի, կոկորդի, թրի և նեարդային հ. երկուշարթի, չորեքշարթի և ուրբաթի։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ Քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէղի, խիւի, ա-րեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (Կոնսիլիումի) դժուարացրի համար առանձին։ Հիւանդանոցում ընդունվում են և ԳԻՆԵՐՈՒԿԻ ՀԻՒՍՏԱՑԻՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ։ (№ 72)

ԹԻՖԼԻՍԻ

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

աշակերտների ընդունելութիւնը լինելու է նոյեմբերի 5-ին։ (121) 1—3

«Մշակի» այս համարի հետ ուղարկ-վում է բաժանորդներին ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ։ 1—1


Հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ և ՈՒՍՈՒՑՈՒՆԻՉ ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԱՅ ՈՍՏՈՒՄՆԱՐԱՆ-ների համար։ Ցանկալի է, որ նրանք լինեն այր և կին, կամ քոյր և եղբայր։ Օրական իւրաքանչիւրը հինգ ժամ պարապմունքով հայերէնից և ուսերէնից. տարեկան երկուսին՝ եօթը հարկւր լուրջի և բնակա-րան։

Գիմէլ հեռագրով. Արտին. Սվաչեն-нику Чухуняну. (№ 116) 2—3

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷՏԻ ՀԱՅՈՑ վիճակային կոնսիստորիայի ատենի մէջ նշանակ-ված է ԱՃՈՒՐԳ 31-ին սոյն հոկտեմբերի, առանց կրկնաձեռքի, վարձով տալու համար Էջմիածնապատկան եռայարկ տունը 6-րդ քաղաքամասում և այգին Սրբաձա-լայի։

(№ 121)

Անգամ կոնսիստորիայի՝ Համազասպ վարդապետ 1—3



Ա. ԿՕՊՊԻ

ՖՕՐՏԵՊԻԱՆԵՐԻ

ԽԱՆՈՒԹՈՒՄ

(Միջաշէկան փողոց, № 132)

Կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 լուրջուց մինչև 450 լուրջի արժողութեամբ։ (№ 119) 2—25

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՐՕՍՄԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀՆՍԻ ԴՐԱՄԱՂՈՒԹՆԵՐ 20,500,000 ՐՈՒՐԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրում է 5.000 Ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապազ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսական պրէմիա 30 Ր. 80 կոպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100.000 Ր. դումար-ների մէկ անձի կենսաբ. համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններ-րով և արժանութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հի-ւանդութեանից, խօլերայից և այլն։

Ցունկարի 1-ին 1894 թ-ի «Բոսսի» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 լուրջի գումարով։

Ապահովագրողները մասն ունեն ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների զիվիդէնտը 1893 թ-ի համար—120/0 է։

Ապահովագրութեան համար այտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Воль-ная Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергиевская, ձ. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։ (№ 85) 12—15

ՀԵՌԱՌՈՍ № 104

ՀԵՌԱՌՈՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ

ԾԻԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թ-ին ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ—ԱՆ տվեր պէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻՈՐ ՊԱՐԳԵՆԵՐԻ—ԼԻՕՆԻ ցու-ցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

„Капризъ“	25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонный“	10 հատը 5 կոպ.
„Театральная“	10 հատը 3 կոպ.
„Флора“	
„Экономная“	

Կարելի է առնել զործարանից և իսկական ծխախոտալաճանների մօտ։ Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—7

ԲԺՇԿԱՊԵՏ

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀ-ՊԱՐՈՆԵԱՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒՍՏԱՑԻՆԵՐ

Մանկարարական և կանանց հիւանդութիւններով։

Հասցեն՝ Նազորայա և Բաղլախայա փողոցների անկիւն, № 13, տուն համ-խարով։ (№ 114) 3—5